

ԿՐԵՂԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ

Մանկավարժական համալսարանում ներդրված կրեդիտային համակարգն ամբողջությամբ համատեղելի է Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի (ECTS) հետ, ինչը Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում սովորողի ակադեմիական շարժունության (ուսանողական փոխանակումներ, ուսումնառության ժամանակահատվածներ օտարերկրյա բուհերում, կրթության շարունակում ավելի բարձր աստիճանում և այլն) ընդլայնման և որակավորումների ճանաչման գրավականն է:

Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգը (ECTS) իրենից ներկայացնում է համաեվրոպական միասնական կրեդիտային համակարգ, որն արտահայտում է մեկ ուսումնական տարում ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածությունը 60 ակադեմիական կրեդիտներով: Այն նախատեսված է Բարձրագույն կրթության եվրոպական տարածքում ուսանողների կրթական արդյունքների արժևորման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ տեղափոխումը դյուրին դարձնելու նպատակով:

Համաեվրոպական ECTS կրեդիտային համակարգի սահմանումները և դրույթները ընդունված են Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում և գործում են ՀՊՄՀ-ի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում:

Կրեդիտային համակարգն ուսուցման գործընթացի կազմակերպման, ուսումնառության արդյունքների ակադեմիական կրեդիտների միջոցով հաշվառման, կուտակման և փոխանցման համակարգ է, որում համապատասխան որակավորումը շնորհվում է ուսումնական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի կուտակումից հետո:

Կրեդիտը դասընթացով կամ կրթական այլ մոդուլով նախանշված կրթական արդյունքներին հասնելու համար ուսանողից պահանջվող ուսումնական բեռնվածության չափման պայմանական միավոր է: ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին և պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքների կատարումը, քննություններին նախապատրաստվելը և դրանք հանձնելը, անհատական հետազոտությունը և այլն:

Այն չափում է միայն ուսումնական բեռնվածությունը և չի ներառում կրթական ծրագրի այս կամ այն բաղադրամասի յուրացման որակը, դրա մակարդակը կամ բարդության աստիճանը, բովանդակությունը և այլն: Կրեդիտը ուսանողին տրվում է միայն դասընթացով նախանշված ելքային կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: ECTS կրեդիտը չի չափում դասախոսի ուսումնական գործունեության (դասավանդման) աշխատածավալը:

Ուսուցման գործընթացը կրեդիտային համակարգով կազմակերպելիս հստակ սահմանվում են որակավորման շնորհման համար անհրաժեշտ կրեդիտների նվազագույն քանակը, այդ կրեդիտները ձևավորող դասընթացների և այլ բաղադրամասերի բովանդակային կազմը՝ ծրագրի պարտադիր և ընտրովի դասընթացների ցանկի տեսքով, դասընթացներին հատկացված կրեդիտները:

ՀՊՄՀ-ի կրթության երեք աստիճաններում ներդրվել է կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգը (ECTS), բոլոր մասնագիտությունների ուսումնական պլանները կազմվել են կրեդիտային համակարգի հենքով (դասընթացներին ամրագրված են համապատասխան կրեդիտային արժեքներ):